ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

ԱՌԱՐԿԱՆ՝ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆԱԻՐԱ ՄՈՍԻԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՕՀԱՆԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3
2. Բարոյական դաստիարակության նպատակը, խնդիրները, միջոցներն ու մեթոդները 5
3. Հայրենասիրական դաստիարակությունը որպես բարոյականության բարձր արժեք 7
4. Հետազոտության նպատակը 7
5. Հետազոտության խնդիրները 7
6. Պարտք կամ պարտականություն 9
7. Պարտք և պատասխանատվություն 10
8. Պարտականություն և իրավունք 11
9. Պարտքը ուրիշների հանդեպ, սեր և հարգանք 11
10. Բարեգործությունը, երախտագիտությունը, կարեկցանքը որպես սիրո պարտականություններ 12
11. Ուրիշների հանդեպ հարգանքի պարտքը 12
12. Ուրիշների հանդեպ հարգանքի պարտքին հակասող արատներ. Մեծամտություն, ծաղրանք, չարախոսություն 13
13. Եզրակացություն 14
14. Գրականություն 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը։ Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում։ Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը։ Արժեքն երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել։ Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն։ Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել։ Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը։ Առանց արժեքների կյանքը դատարկ է։ Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման։ Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ։ Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի։ Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում։ Նորմերը տարբեր են քաղաքում և գյուղում։ Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձևավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի։ Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր։ Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ։ Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում։ Հիմա անդրադառնանք բարոյականությանը։ Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է։ Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց։ Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման։ Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը։ Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը։ Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը։ Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը։ Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել։

Սովորողների դաստիարակության իրականացումը միշտ էլ եղել ու մնում է կրթության կարևորագույն խնդիրներից մեկը: Ճիշտ է, ժամանակակից կրթական մոտեցումներում դաստիարակության խնդիրը փոխարինվում է արժեքների ձևավորման խնդրով, բայց դրանից հարցի էություն չի փոխվում: Եվ ադ բարօրությունը պայմանավորվում է մարդու արժեքների աշխարհով, արժեքային կողմնորոշումով: Բարոյական արժեքները կազմում են մարդու արժեքային համակարգի կարևորագույն մասը: Իսկ որտե՞ղ պետք է ձևավորվեն այդ արժեքները՝ ընտանիքո՞ւմ, շրջապատո՞ւմ, եկեղեցո՞ւմ, թե՞ դպրոցում: Հետազոտողները, կարևորելով բոլոր այս օղակների դերը, կանգ են առնում նաև վերջին օղակում՝ հանրակրթական դպրոցում արժեքների ձևավորման խնդրի վրա: Հարկ է նշել, որ հանրակրթության պետական կրթակարգում և հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչներում որոշակի ուշադրություն է դարձվում բարոյական արժեքներին: Հարկ է նկատել, որ հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր ուսումնական առարկա ունի նման արժեքների ձևավորման համար անհրաժեշտ կրթական ներուժ: Բարոյական արժեքների ձևավորման հսկայական ներուժ ունեն հանրակրթական դպրոցի «Բնագիտություն» ուսումնական բնագավառի առարկաները: Այս հետազոտական աշխատանքում ես դիտարկել եմ աշխարհագրության դասավանդման գործընթացի միջոցով բարու, արդարության, առաքինության, կյանքի իմաստի և երջանկության բարոյական արժեքների ձևավորման խնդիրներին

Բարոյական դաստիարակության նպատակը, խնդիրները, միջոցներն ու մեթոդները

Բարոյական դաստիարակության հիմնական էությունը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է:
Դպրոցականի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումը կախված են տվյալ երկրի սոցիալական պայմաններից , այն հանրությունից , որում նա ապրում և գործում է: Եթե դրանք իրենց բարձրության վրա չեն գտնվում , եթե չկան նյութական բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, քաղաքական առողջ մթնոլորտ, քաղաքակրթություն, ապա այնտեղ անձի բարոյականությունն ու բարոյական զարգացումը կայուն լինել չեն կարող:

Ինչպես բարոյական վարքի սովորույթների դաստիարակումը, այդպես էլ բարոյական գիտակցման ձևավորումը բարդ գործընթաց է և ձեռք է բերվում մի շարք մեթոդների օգտագործումով: Դրանց միջոցով է ուսուցիչը հասնում այն բանին, որ երեխաները գիտելիքներ յուրացնեն բարոյականության և նրա կանոնների մասին, նրանց մեջ ձևավորվի բարոյական պատկերացումների, հասկացությունների և արժեքների համակարգ:

Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է: Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքում: Բարոյական զարգացմանը նպաստում են անձի շփումները, հաղորդակցումները, որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը:

. Բարոյական դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է, այլև նրա կարևոր գործառնությունն է, հասարակությանը այնպիսի մարդու հավելումը, որը մշտապես կկատարի բարոյական գործողություններ ու արարքներ՝ հօգուտ հասարակության և հօգուտ մարդու:

Բարոյական արժեքներով դաստիարակված մարդը առաքինի է, բարեկիրթ: Այդպիսի մարդու նիստուկացը, գործողություններն ու արարքները , մարդկանց հետ հարաբերությունները, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը, յուրահատուկ են և օրինակելի: Բարոյական զարգացումից զուրկ մարդը հասարակության համար անտանելի բեռ է:

Ուսուցչի խնդիրը պետք է լինի դրական արարքների կատարումը դարձնել դպրոցականի համար մշտական սովորույթ, նրա բնավորության կայուն գիծը, որպեսզի նա միշտ կատարի դրական արարքներ և դրա հիման վրա ձևավորի վարքի դրական կուլտուրա: Հեգելը գրում էր.«Երբ մարդը կատարում է այս կամ այն բարոյական արարքը, դրանով դեռևս առաքինի չէ: Նա առաքինի է այն դեպքում , երբ վարքագծի այդ եղանակը դառնում է նրա բնավորության մշտական գիծը»:,

Բարոյական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ են դասվում անձի գիտակցության, զգացմունքների ու վարքի ձևավորումը: Երկրորդ խմբի մեջ են մտնում բարոյական բարձր որակները՝ հայրենասիրությունը, գիտակցական կարգապահությունը, քաղաքացիական դաստիարակությունը և այլն:

Հմուտ ուսուցիչը պետք է բարոյական դաստիարակության ուղիներ որոնի, աշակերտների մեջ ձևավորի բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնելու կարողություններ:

Նա իր օրինակով պետք է բարություն ու համեստություն սերմանի:

Շատ կարևոր են բարոյական թեմաներով զրույցները : Նախօրոք լավ մշակված հարցերի միջոցով կարելի է քննարկել որևէ անձի վարքագիծը, բնավորության գծերը, արարքները, վերլուծել որևէ կինոնկար,, կարդացած վեպի հերոսների հոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Բարոյական թեմայով բանավեճի նյութ կարող է լինել շրջապատի կյանքի առօրյան, հասարակության զարգացմանը խոչընդոտող պատճառները , սոցիալական անարդարությունները, մեծ իրադարձությունների պատճառների բացահայտումը և այլն:

Մանկավարժը պետք է իմանա, թե կրտսեր, դեռահասության տարիքներում բարոյական ի՞նչ որակներ սերմանի:

Նա պետք է կարողանա գտնել բարոյական զարգացման առանցքը, հիմքը: Դրանում է երևում ուսուցչի մանկավարժական վարպետությունը:

Դեռահասության տարիքում երեխան ամենուր է՝տանը, դպրոցում, բակում, թաղամասում, հասակակիցների շրջապատում և այլն: Այս վայրերում էլ նա ձեռք է բերում մերձավոր շրջապատի միջավայրը յուրացնելու փորձ:

Դեռահասի համար այս տարիքում մեծ նշանակություն ունի օրինակի ուժը: Նա դառնում է յուրօրինակ հետաքրքրասեր առաջին հերթին իրենց շրջապատող մարդկանց համար: Նրանց մեջ հայտնաբերում է այնպիսի որակներ,որ ինքը չունի, դրա համար կողմնորոշվում է դեպի նրանց օրինակը:

Մանկավարժի խնդիրն է դրական բարոյական օրինակի ձևավորումը և բացասական արարքներից աշակերտներին ետ պահելը, իսկ դրան նա պետք է հասնի իր ճիշտ կողմնորոշման, մանկավարժական տակտի, վարպետության և հեղինակության շնորհիվ:

Դեռահասության տարիքում ուսուցիչը իր սանին կողմնորոշում է բոլոր արարքներում, ապա օգնում նրան յուրացնելու բարոյական զարգացմանն ու բարոյական հասկացություններին վերաբերող գիտելիքներ, դրանք դարձնում նրա համոզմունքները, նրա համար մշակում ինքնադաստիարակության ծրագիր:
Նա խորհուրդներ ու ցուցումներ է տալիս դեռահասին , թե ինչպես կիրառելև իրացնել այդ ծրագիրը:

Հմուտ մանկավարժը, օգտագործելով ուսումնական առարկաների բոլոր հնարավորությունները, պատանուն կարող է զինել բարոյականությանը վերաբերող տեսական գիտելիքներով : Նա կարող է կազմակերպել բարոյական թեմաներով զրույցներ, դասախոսություններ և բանավեճեր:

Հայրենասիրական դաստիարակությունը որպես բարոյականության բարձր արժեք

Սովորողի հայրենասիրական դաստիարակությունը միշտ էլ գտնվել և գտնվում է դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ դպրոցական ուսումնառության գործընթացը նպաստավոր պայմաններ է ստեղծում աշակերտի մոտ հայրենիքի հանդեպ պատկերացումներ և սեր արմատավորելու, ազգային ինքնագիտակցություն ձևավորելու, հայրենիքի պաշտպան դաստիարակելու գործում: Հանրակրթության պետական կրթական չափորոշիչով պայմանավորված՝ հստակ պահանջներ են ներկայացված սովորողի արժեքային համակարգի ձևավորման համար, որի բաղկացուցիչ մասն են կազմում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության, ազգային հոգևոր արժեքների գնահատման սկզբունքները1 : Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր սերունդ:

Արդի ժամանակաշրջանում երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարա - կության հարցը առավել հրատապ է: Հայրենասիրական դաստիարակության ծրագիրն անհրաժեշտ է իրականացնել երեխաների ուսուցման և դաստիարակության նոր մոտե - ցումների կիրառման միջոցով: Առաջին հերթին, դա նշանակում է հրաժարվել դաստիա - րակության ավտորիտար միջոցներից: Ուսուցումը պետք է լինի ուղղակի, զարգացնող, հարստացնի երեխայի գիտելիքները, ձևավորի ճանաչողական հետաքրքրություններն ու կարողությունները: Անհրաժեշտ է հստակ պատկերացում, թե ինչպես ենք մենք ցանկանում դպրոցականի մեջ դաստիարակել հայրենասիրություն, սեր երկրի, քաղաքի, հարազատների, հարգանք մեծահասակների հանդեպ: Այդ աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ է կատարելագործել բարոյական դաստիարակությունը, զարգացնել երեխայի անձնական մշակույթը, որպես հայրենիքի հանդեպ սիրո հիմք: Այս նպատակի իրականացման համար անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ խնդիրները. յուրաքանչյուր դպրոցականի մեջ առաջացնել հետաքրքրություն իր քաղաքի, մարզի, երկրի պատմության վերաբերյալ, ձևավորել մարդասիրական վերաբերմունք շրջակա միջավայրի, բոլոր կենդանի էակների նկատմամբ, յուրաքանչյուր երեխայի մեջ արթնացնել հետաքրքրասիրություն, գեղեցիկը զգալու ունակություն, իր ընտանիքի, իր տան, իր սե փական ժողովրդի, նրա պատմության, սովորույթների և ավանդույթների հանդեպ ձևավորել սիրո, ջերմության և պատասխանատվության զգացում, օգնել ծնողներին պահպանել և զարգացնել երեխաների հետաքրքրասիրությունը ծնող-երեխա-դպրոց համատեղ գործունեության ընթացքում:

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողական, համբերատար աշխատանք. այն չի ձևավորվում միանգամից. դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի մաս ու բնավորության գիծ:

Հարկ է նշել, որ դեռահասության և պատանեկան տարիքում աշակերտն իր արարքներում հաճախ հիմնվում է հասարակական կարծիքի և բարոյական պատկերացումների վրա, յուրացնում է դրանք, և գալիս է մի պահ, երբ արդեն կարող է ինքնուրույն կարգավորել ու վերահսկել իր արարքները, գործողությունները՝ առաջնորդվելով սեփական բարոյական նորմերով, արժեքներով, պարտքի պատասխանատվության գիտակցմամբ, սեփական արժանապատվությամբ ու խղճի թելադրանքով:

Իսկ հատկապես ավագ դպրոցական տարիքում կարելի է խոսել ինքնության մասին: Պետք է հստակ գիտակցել, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը: Անքննելի է այն փաստը, որ հայրենասիրությունն ամենաուղղակի առնչությունն ունի ծնողասիրության ու որդեսիրության հետ, և որ պատմությունն այդ իմաստով լավագույն ուսուցիչը կարող է լինել աշակերտների համար: Սովորողների բարոյական նորմերի, հայրենասիրության ձևավորման արդյունավետությունը երևում է այն ժամանակ, երբ դաստիարակության խոսքային մեթոդները զուգակցվում են գործունեության տարբեր ձևերի հետ, և աշակերտը այդ գիտելիքները դրսևորում է իր առօրյա վարքում՝ տանը, դպրոցում, ընկերների շրջանում:

<u>Հետազոտության նպատակը</u>

- ✓ Բացահայտել և հիմնավորել հայ դպրոցականի ազգային արժեհամակարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում աշխարհագրություն առարկայի դերն ու կարևորությունը
- ✓ Բացահայտել սովորողների վերաբերմունքը բնության, երկրի բնական պաշարների, նրանց կարևորության և արժեվորման վերաբերյալ իրենց ունեցած գիտելիքները,վերհանել սխալները, թերությունները:
- ✓ Կիրառել մեթոդական հնարներ , ուսուցման ժամանակակաից մեթոդներ սովորողների մոտիվացիան բարձրացնելու համար:
- ✓ Դպրոցական խմբակների շրջանակներում ,ինչպես նաև դասաժամերին անրադառնալ երկրի բնական պաշարներին, որոնք ավելի կոգևորեն սովորողներին ,կդաստիարակաեն արժևորելու կարողությամբ:

<u>Հետազոտության խնդիրները</u>

- ✓ Ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների բարոյական գիտակցության ձևավորումը սեփական ռեսուրսների գնահատման գործընթացում:
- ✓ Պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Պարտք կամ պարտականություն

Մարդու անհատական և ընկերային կյանքի կազմակերպման համար անհրաժեշտ կարևորագույն արժեքներից մեկը պարտքն է: Ըստ Հեգելի, մարդու պարտքը արդար գործ կատարելն ու ընդհանուրի բարիքի համար հոգ տանելն է:

Գոյություն ունեն պարտքի կամ պարտականության հետևյալ տեսակները:

1) Որպես կենդանի էակ՝ մարդը ունի պարտականություններ իր և բնության հանդեպ:

ա. Իր գոյությունը պահպանելու պարտականություն, որի համար նա հոգ է տանում իր կենսական կարիքների համար՝ սնվում է, հագնվում, տուն կառուցում և այլն:

բ. Մարդկային տեսակը պահպանելու պարտականություն, որի համար մարդը ամուսնանում է, ընտանիք կազմում, երեխաներ ունենում, հոգ է տանում նրանց մեծացնելու մասին:

2) Որպես հոգևոր էակ՝ մարդը ունի պարտավորություններ իր և ուրիշների հանդեպ.

ա. Պարտականություններ իր հանդեպ՝ որպես հոգևոր էակի, որի համար մարդը հոգ է տանում իր հոգևոր կարիքները բավարարելու մասին՝ կրթություն է ստանում, մասնագիտական գործունեություն ծավալում, հաղորդակցվում է հոգևոր արժեքների հետ: բ. Պարտականություններ ուրիշների՝ - ծնողների, երեխաների, հարազատների, հարևանների և իր հետ առնչվող այլ մարդկանց հանդեպ, - ընտանիքի, աշխատանքային կոլեկտիվի, ընկերային այլ խմբերի, հասարակության, ժողովրդի, պետության, հայրենիքի հանդեպ:

3) Հասարակությունը և պետությունը նույնպես ունեն պարտականություններ մարդու հանդեպ:

Եթե անդրադառնալու լինենք բարոյական ոլորտին, ապա այստեղ մարդու պարտքն է հետևել առաքինությանը, ուրիշների նկատմամբ լինել բարի և բարիք գործել իր հնարավորությունների սահմաններում, հեռու մնալ արատներից և դիմակայել չարին: Կրթական ողջ գործընթացը, աշխարհագրության դասավանդման գործընթացը՝ մասնավորապես, նաև պարտքի և պարտականությունների իրականացման, համապատասխան արժեքների ձևավորման գործընթաց է:

Պարտք և պատասխանատվություն

Պարտքի, պարտականությունների նկատմամբ մարդու վերաբերմունքը արտահայտվում է պատասխանատվությամբ:

Կրթության գործընթացի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ են թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի կողմից այս ուղղությամբ իրենց ունեցած պարտքի կատարման հանդեպ պատասխանատվության համապատասխան դրսևորումներ: Բնականաբար, գործընթացի առաջին և հիմնական պատասխանատուն ուսուցիչն է, որը կրում է նաև աշխատանքային պարտավորություններ: Սակայն ուսուցչի աշխատանքային պարտավորությունների իրականացումը, եթե խոսքը վերաբերում է բարոյական դաստիարակությանը, մասնավորապես՝ նրա պարտքին վերաբերող գործառույթների իրականացմանը, չափազանց բարդ գործընթաց է: Հիմնական բարդությունը կայանում է դրանց ոչ հստակության, դժվար վերահսկելիության և սպասվելիք արդյունքների ստուգման ու գնահատման դժվարության կամ անհնարինության մեջ: Իսկապես, եթե սովորողի մոտ գիտելիքի կամ կարողության առկայությունը կարելի է ստուգել, գնահատել և վերահսկել բանավոր կամ գրավոր հարցման միջոցով, ապա բարոյական այս կամ այն որակի առկայությունը կարելի է ստուգել միայն այնպիսի իրադրության պայմաններում, որտեղ այդ որակը հնարավորություն ունի դրսևորվելու: Եվ դրսևորվելու դեպքում էլ ստուգվողը կարող է դիտավորյալ չցուցաբերել այդ որակը, կեղծել, եթե դա իրեն ձեռնտու չէ: Միաժամանակ, ուսուցիչը դաստիարակչական խնդիրները իրականացնելու շահագրգռվածություն և կոնկրետ պայմանագրով ամրագրված պարտավորություն չունի, իսկ չկատարված աշխատանքի համար էլ պատասխանատվություն չի կրում: Եվ դաստիարակության ամբողջ խնդիրը, ըստ էության, հանգում է ուսուցչի բարոյական մոտեցմանը. ինչքանո՞վ է նա կատարում ուսուցիչ լինելու իր առաքելությունը, որը առաջին հերթին դաստիարակ է:

Տվյալ առարկայի դասավանդման գործընթացը այս ուղղությամբ պահանջում է ավելի մեծ ու լրացուցիչ ջանքեր թե՛ ուսուցչի, թե՛ աշակերտի կողմից: Թեթևամտության, անտարբերության, անբարեխղճության, անհոգության և անփութության յուրաքանչյուր դրսևորում կարող է ձախողել ուսումնական նյութի յուրացումը, ինչը բացասաբար կանդրադառնա նաև այդ նյութից կախված հետագա թեմաների յուրացման վրա և, հետևապես, աշարհագրության դասավանդման գործընթացը մեծապես կարող է նպաստել այդ որակների ձևավորմանը:

Պարտականություն և իրավունք

Պարտականությունը սերտորեն կապված է նաև իրա վունքի հետ և հանդես է գալիս նրա հետ միասին: Մեկի համար իրավունքի ստացումը ենթադրում է մյուսի կողմից պարտավորությունների ստանձնում, և հակառակը՝ մեկի համար պարտավորությունների ստանձնումը ենթադրում է մյուսի կողմից իրավունքի ստացում: Ուսուցչի իրավունքը և պարտականությունները նույնպես սահմանվում են իրավական պայմանագրերով: Սակայն նման մոտեցումը այս դեպքում չի կարող արտահայտել իրերի բնական ընթացքը, քանի որ ուսուցչի աշխատանքը ունի էական առանձնահատկություններ մնացած մասնագիտությունների համեմատությամբ:

Ինչ վերաբերում է աշակերտների իրավունքներին և պարտավորություններին, ապա խորհրդային կրթական մոտեցումները միայն պարտականություններ էին ամրագրում աշակերտների համար նախատեսված կանոնակարգերում: Նպատակը ոչ թե ազատ մտածող քաղաքացի, այլ քաղաքական համակարգին հնազանդ ծառայողներ պատրաստելն էր: Այսօրվա մեր կանոնակարգերը կարծեք չեն տարբերվում նախկիններից: Իսկ պայմանագրերում սովորողների իրավունքի թռուցիկ անդրադարձների վրա էլ ուշադրություն դարձնող չկա:

Պարտքը ուրիշների հանդեպ, սեր և հարգանք

Կանտը առանձնացնում է ուրիշի նկատմամբ մարդու պարտականությունների երկու տեսակ: Պարտականությունների առաջին տեսակի կատարումը համարվում է ծառայություն, որով նաև պարտականություն է դրվում ուրիշների վրա: Նման պարտականությունների կատարմանը ուղեկցում է սիրո զգացմունքը. Պարտականությունների երկրորդ տեսակի կատարումը ուրիշների վրա պարտականություն չի դնում, այն պարտք է, որ հետևում է պարտավորությունից: Ուսուցչի՝ աշակերտին ցույց տրվող օգնությունը նրա պարտակնությունն է, որ բխում է իր պարտավորություններից և, հետևապես, այն աշակետի վրա պարտականություն չի դնում: Ուսուցչի այս աշխատանքը արժանի է հարգանքի: Իսկ ընկերոջ կողմից աշակերտին ցույց տրվող օգնությունը սիրո զգացմունքի դրսևորում է, որովհետև չի բխում աշակերտի նկատմամբ նրա պարտավորությունից: Նման օգնությունը ենթադրում է նաև պարտավորության ստանձնում օգնվողի կողմից: Չնայած սերը և հարգանքը կարող են գոյություն ունենալ և գնահատվել իրարից անկախ, սակայն այդ երկու զգացմունքները հանդես են գալիս միասնաբար: Օրինակ, երեխայի նկատմամբ պարտականությունների կատարումը բխում է ծնողի պարտավորություններից և կարող է գնահատվել հարգանքով: Նման պարտականությունների կատարումը երեխայի վրա փոխադարձ պարտականություններ չի դնում: Սակայն այդ պարտականությունների կատարումը, սովորաբար, ուղեկցվում է այնպիսի գործողություններով, որոնք չեն բխում ծնողական

պարտավորություններից և ուղեկցվում են սիրո զգացմունքով: Այդպիսին է պատկերը նաև ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում: Իրականում սիրո և հարգանքի միասնականությունը ավելի խորը դրսևորում ունի: Աշխարհագրության դերը շրջակա աշխարհի ուսումնասիրության, մարդու հոգեկան աշխարհի զարգացման գործում, կիրառական հսկայական նշանակությունը մարդուն դարձնում են ցանկալի՝ ինչպես գործնական, այնպես էլ հոգևոր խնդիրների քննարկման և իրականացման տեսակետից:

Բարեգործությունը, երախտագիտությունը, կարեկցանքը որպես սիրո պարտականություններ

Եթե բարեհաճությունը ուրիշների բարօրությունից ստացած հաճույքն է: Բա րեգործությունը բարօրություն անելը, յուրաքանչյուրի պարտքն է: Այն ենթադրում է օգնել մարդկանց, նպաստել նրանց երջանկությանը, դրա դիմաց չակնկալելով որևէ փոխհատուցում: Երախտագիտությունը մեծարանքն է, որ ցուցաբերվում է բարերարություն անողի նկատմամբ: Բարերարությունը ընդունողի կողմից բարերարի նկատմամբ համապատասխան զգացմունքը հարգանքն է, իսկ նրա նկատմամբ բարեգործի տածած զգացմունքը՝ սերը: Աշարհագրության ուսուցման գործընթացը ունի մարդկային սիրո՝ բարեգործության, երախտագիտության և կարեկցանքի դրսևորման հսկայական հնարավորություններ ինչպես ուսուցիչ-աշակերտ, այնպես էլ աշակերտ-աշակերտ փոխհարաբեություններում: Ուսուցիչը կարող է նաև դասավանդման գործընթացում հասնել ուժեղ աշակերտների կողմից ավելի թույլ աշակերտների նկատմամբ անշահախնդիր օգնության կազմակերպման, ինչը բարեգործություն է և ծնում է երախտագիտության զգացում: Դասավանդման գործընթացը մեծապես կարիք ունի և լավագույնս կարող է ծառայել կարեկցանքի զգացմունքի դրսևորմանը, ինչը առանձնապես ակնառու է դասավանդման գործընթացում:

Ուրիշների հանդեպ հարգանքի պարտքը

Արդեն ասվել է, որ մարդկային ցեղին պատկանելիությունը արժանիք է, և յուրաքանչյուրի պարտքն է հարգել այդ արժանիքը կամ մարդկային արժանապատվությունը: Ուրիշին արհամարելը՝ նրան որպես մարդ հարգանքի չարժանացնելը բոլոր պարագաներում դեմ է մարդու հանդեպ հարգանքի պարտքին. Ծանրագույն արատ գործած մարդը դրանով ցույց է տալիս իր վարքի անհամապատասխանությունը իր մարդկային արժանապատվությանը: Բայց և այնպես, նա մնում է մարդ և որպես այդպիսին ամբողջովին չի զրկվում հարգանքից: Անհրաժեշտ է առանձնապես զգույշ լինել ուրիշի հանդեպ հարգանքի պարտքի նկատմամբ: Իսկապես, եթե սիրո պարտքի մոռացումը, նրա չկատարելը չի վնասում, չի վիրավորում որևէ մեկին, ապա հարգանքի պարտքի անտեսումը վիրավորում է ինչ-որ մեկի

արժանապատվությունը: Այդ պատճառով վերջինս արատ է, ի տարբերություն առաջինի, որ ընդամենը մեղանչանք է բարոյականության դեմ:

Վեհանձնությունը հարգանքի բարձրագույն աստիճանն է, իր և ուրիշների մարդկային արժանապատվության խորը զգացումը: Վեհանձն մարդը մեծահոգի է ընկածների նկատմամբ, պատրաստ ցավակցելու թույլերին, վիրավորվածներին, ստորացվածներին: Վեհանձնության հակառակ երևույթը ստորությունն է: Սակայն մաթեմատիկական կրթության ոչ ճիշտ կազմակերպումը կարող է նաև ունենալ բացասական ազդեցություն մարդկային արժանապատվության ճանաչման, մարդու նկատմամբ հարգանքի ձևավորման գործում:

Ուրիշների հանդեպ հարգանքի պարտքին հակասող արատներ. մեծամտություն, ծաղրանք, չարախոսություն

Մեծամտությունը բարոյական մոտեցում է, որին հետևողը իրեն ուրիշներից բարձր է դասում և սպասում է, որ ուրիշներն էլ իրենց իրենից ցածր կդասեն: Հասկանալի է, որ նման մոտեցումը արատավոր է, քանի որ հակասում է ուրիշի նկատմամբ հարգանքի պարտքին: Ուրիշին' նրա թերությունները ի ցույց դնելով, ծաղրի առարկա դարձնելու հակվածությունը, ուրիշների սխալների հաշվին զվարճանալը, մանավանդ' եթե համապատասխան թերություններն ու սխալները մտացածին չեն, ծաղրանք են: Ծաղրանքը սովորաբար ներկայացվում է որպես կատակ, բայց իրականում այն կատակի հետ ընդհանուր ոչինչ չունի և ուրիշի հանդեպ հարգանքի պարտքի լուրջ խախտում է: Նման պարտքի առանձնապես լուրջ խախտում է թունոտ ծաղրը կամ չարախ նդությունը, երբ աշխատում են արժանի մեկին թերություններ վերագրելով' նրան զրկել վաստակած հարգանքից: Ինչ վերաբերում է չարախոսությանը, ապա այն կարող է դրսևորվել ցանկացած ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում: Նշված բոլոր արատների բացառումը, ինչպես արդեն նշվեց վերևում, հնարավոր է ուսուցչի հետևողական աշխատանքի արդյունքում: Այստեղ մենք, իհարկե, բացառում ենք ուսուցչի կողմից այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք իրենք են հանգեցնում այդ արատների ձևավորմանը: Դժբախտաբար, հանդիպում են նաև նման գործողություններ իրականացնող «ուսուցիչներ»...

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ կարծիքով բարոյական դաստիարակությունը պետք է իրականացնել ոչ թե աշակերտի վարքի մեջ այս կամ այն շեղումը նկատելիս համապատասխան խրատներ տալով, այլ յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում դաստիարակության բովանդակությունը կազմող արժեքների հետևողական ձևավորման միջոցով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Մի անգամ ևս արժե հիշել, որ ցանկացած ուսումնական առարկայի նպատակը ոչ թե տվյալ առարկայի ուսուցումն է, այլ դրա միջոցով կրթության կազմակերպումը: Նման մոտեցումը իրականացնելու դեպքում ուսուցիչը յուրաքանչյուր թեմայի ուսուցման մեջ կգտնի աշակերտներից յուրաքանչյուրին անհրաժեշտ կրթական չափաբաժինը, ինչի իրականացումը ոչ միայն կբացառի վերը նշված բարոյական շեղումները, այլև կնպաստի սեփական արժանապատվության և իր նկատմամբ իր և ուրիշների կողմից հարգանքի պարտքի իրականացմանը:

Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Չ. Ուայթ, Քաղաքացիական կրթության բարոյական տեսանկյունը, սովորությու՞ն, թե՞ գիտակցական ընտրություն: Մարդ և հասարակություն, N1, 2010:

2. Հանրակրթության պետական կրթակարգ, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Մնտարես, 2004:

3. Հ. Ս. Միքայելյան, Բարոյական արժեքները և ուսուցման գործընթացը, բարին, չարը, արդարությունը, N3, 2010:

4. . Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում -Երևան 1986

5. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005:

6.Սուխոմլինսկի Վ.Ա., Ինչպես դաստիարակել իսկական մարդ, Երևան, 1980: